ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

ԳԱԳԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ

Կյանքն ինքնին բարեկեցության ձգտում է, և ով փորձի սրան առարկել՝ ծածուկ թե բարձրաձայն հեգնելով հեդոնիզմի գաղափարաբանությանը, կիակասի տիեզերական ճշմարտությանը: Դրանով նա մարդուն կդիտարկի սոսկ որպես միջոց զանազան, թեկուզ և ամենավեհ նպատակների համար: Մարդկային էությունից և բնույթից է բխում բարեկեցության ձգտումը, որքան էլ որ «սպառողական» հնչի այս միտքը՝ ենթարկվելով քննադատված լինելու վտանգին: Իսկ բարեկեցության ապահովման հիմքում ընկած է տնտեսական աճը:

Տնտեսական աճը՝ որպես տնտեսության մեջ տեղի ունեցող դրական տեղաշարժ, բովանդակային առումով ընդգրկում է ողջ տնտեսությունը, և սա ակնհայտ է, քանի որ վերջինս հասարակական, տեխնոլոգիական, մշակութային և այլ տարբեր ամփոփող միասնական համակարգ է: Նույնքան էլ ակնհայտ է, որ աճ կոչվող համընդգրկուն և բազմաշերտ փոփոխությունը անհնարին է լիարժեքորեն լուսաբանել հասարակական արդյունքի մեծությունը բնութագրող և մինչ այժմ կիրառվող համախառն ներքին արդյունքի՝ ՀՆԱ ցուցանիշի միջոցով: Եվ առհասարակ, անհնարին է կառուցել մի այնպիսի ցուցանիշ, որը ներառի երևույթի մեծությունը պայմանավորող բոլոր ուժերի չափը: Որքան էլ բազմաթիվ և կարևոր լինեն ազդող գործոնները, միևնույնն է, դրանց զգալի մասը հարկադրաբար անտեսվելու է՝ դրանով իսկ աղավաղելով իրականությունը: Բայց սա անխուսափելի է:

ՀՆԱ ցուցանիշի անկատարությունները՝ ազգային արդյունքի կառուցվածքի ու եկամուտների անարդարացի բաշխման անտեսումը և այլն, արդեն այբբենարանային ճշմարտությունների կարգի են: Վերափոխելով դեմոկրատիայի մասին Ու. Չերչիլի հայտնի միտքը՝ կարող ենք ասել, որ ՀՆԱ ցուցանիշն օգտագործվում է ոչ թե ըստ նրա բարեմասնությունների, այլ ըստ այն իրողության, որ գոյություն ունեցող մյուս ցուցանիշները դրանից ավելի թերի են:

Առավել ամբողջական ցուցանիշի մշակման փորձերը շարունակական են, ուստի բոլորովին էլ հայտնություն չէր, որ 2018 թ. Դավոսի տնտեսական համաժողովում առաջարկվեց կիրառել մի նոր ցուցանիշ՝ Inclusive Development Index (IDI)[1]: Վերջինս հայերենով ներկայացվեց

[1] Տե՛ս http://www3.weforum.org/docs/WEF_Forum_IncGrwth_2018.pdf

որպես «ներառական աճի համաթիվ»։ Խանդավառության բարձր աստիճանի վրա սա ընկալվեց որպես ՀՆԱ-ին այլընտրանք։ Իրականում դրա հիմքը ՀՆԱ ցուցանիշն է[2], տնտեսության և հասարակության մեջ տեղի ունեցող այլ երևույթները՝ կյանքի սպասվելիք տևողությունը, աղքատության մակարդակը, խնայողությունները, պետական պարտքը, բնութագրող ցուցանիշների ներառմամբ։

Վարկանիշային ցուցանիշները բավարար արդյունավետությամբ կիրառելի են ամենատարբեր ոլորտներում, և այս առումով պարսավելի ոչինչ չկա։ Սակայն քաղաքական և տնտեսագիտական շրջանակներում IDI-ի անհաջող, ավելի ստույգ՝ ձախողված թարգմանության արդյունքը՝ «ներառական աճի համաթիվ»[3], մեր համոզմամբ, ոչ միայն անբովանդակ է, այլև վնասաբեր։

Ընդունված է, որ տերմինը կոչված է ներկայացնելու որոշակի գիտական հասկացություն։ Ուստի որքան մեծ լինի ընտրված տերմինի բառային իմաստի և գիտական հասկացության բովանդակության համապատասխանության աստիճանը, այնքան արդյունավետ կլինեն աշխարհի ճանաչողությանն ուղղված ջանքերը և մարդկանց արդյունքաբեր գործունեությունը։ Տվյալ դեպքում բովանդակային առումով ճշմարիտ է և իրատեսական զարգացման ներառական (եթե ներառական բառից չեն ուզում հրաժարվել) կամ «զարգացման ամփոփ համաթիվ» ձևակերպումը։

Ցանկացած համակարգում, այդ թվում նաև տնտեսության մեջ կատարվող փոխակերպումները, որոնք բնութագրվում են «զարգացում» տերմինով, ներառական կամ ոչ ներառական լինել չեն կարող։ Այլ բան են դրանք բնորոշելու մարդկային փորձերը, որոնք իսկապես կարող են նվազ կամ առավել ընդգրկուն լինել։ Ինքլյուզիվ՝ թարգմանաբար՝ «ներառված», հյուրանոցային սերվիսից փոխառված բառը որպես տնտեսագիտական տերմին անհարկի կիրառելու հետևանքը եղավ այն, որ շրջանառության մեջ դրվեց հայերենում նորաստեղծ, բայց անբովանդակ «ներառական տնտեսություն» բառակապակցությունը։ Որևէ բանական էակ չի փորձի պնդել, որ գունդը գունդ է և բրգաձև լինել չի կարող, քանի որ սա անհեթեթություն է։ Բայց նույնքան անհեթեթ չէ՞ արդյոք գնդաձև գունդ արտահայտությունը։ Իսկ ներառական տնտեսութ-

---

[2] Այս պնդման ապացույցը ՀՆԱ ցուցանիշով մի կողմից և IDI ցուցանիշով մյուս կողմից երկրների դասակարգումների համընկման իրողությունն է, իհարկե՝ ոչ առանց բացառությունների։ Այսպես, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ բարձր մակարդակ ունեցող Նորվեգիան, Լյուքսեմբուրգը, Շվեյցարիան,Դանիան IDI ցուցանիշով դարձյալ առջևում են։ Բացառություն են Իսլանդիան, որը տասներկուսից տեղափոխվել է երկրորդ տեղը, և ԱՄՆ-ն, որը հայտնվել է քսաներեքերորդ տեղում՝ պայմանավորված պետական պարտքի մեծությամբ, կյանքի համեմատաբար կարճ տևողությամբ, եկամուտների խիստ բևեռացված բաշխմամբ (տե՛ս նույն տեղը, էջ 3)։

[3] Տերմինաշինության բանավեճ չենք նախաձեռնում, բայց նմանօրինակ «կոթողները» սակավ չեն՝ «լճազնաճ», սա ստագֆլացիան է (տե՛ս **Փ. Սամյուելսոն, Ու. Նորդհաուս,** Տնտեսագիտություն, Մակրոտնտեսագիտություն, Եր., 1995, էջ 115)։

յունը հենց այս կարգի նույնաբանություն է։ Ներառական կարող են լինել սպորտային խմբակը, դպրոցը, նույնիսկ խորհրդարանը, բայց ոչ՝ տնտեսությունը։

Տնտեսական աճի ապահովումը կառավարությունների գործունեության գնահատման հիմնական չափանիշն է եղել և կա։ Սա էլ դրդել է կառավարություններին զանազան հնարքներով՝ սկսած տապանաքարերի ու գերեզմանների ընդգրկումից և վերջացրած հարկային հավաքագրումների ավելացմամբ[4], ապահովել տնտեսական աճի բարձր ցուցանիշ, ինչն էլ բազմաթիվ դեպքերում փորձ է արվել ներկայացնել որպես բարեկեցության աճ։ Իսկ իրականում բարեկեցության աճի բացակայության և երբեմն նաև անկման պատճառով այդ հասկացությունը ամբողջությամբ բովանդակազրկվել է։ Նման իրավիճակում ներկայումս հայտնվել են հատկապես հետխորհրդային հասարակությունները, որոնց անցյալի անբաժան մասն էր պետական սուտը։

Տնտեսական աճի ցուցանիշի և բարեկեցության բարձրացման ոչ համաժամանակյա ընթացքը տնտեսագիտության առջև այս անհամապատասխանությունը մեկնաբանելու խնդիրն է դրել։ Սա այդքան էլ երկրորդային հարց չէ, որքան կարող է թվալ՝ ծնելով պատճառաբանություն, որ ինչ-որ ժամանակ հետո այդ աճը կհանգեցնի բարեկեցության բարձրացման։ Շուկայական պայմաններում ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու և դրանով իսկ բարեկեցության աճը ապահովելու նորմալ միջոցը փոխանակության նպատակով համարժեք ապրանքներ և ծառայություններ առաջարկելն է։ Այսինքն՝ ոմն մեկի հարըստացման պայմանը մյուսի բարեկեցության աճն է, ինչի չգոյությունը համարժեքային փոխանակության խաթարման հետևանք է։ Իսկ համարժեքային փոխանակությունը շուկայական տնտեսության կենսագործունեության հենքն է։ Ամբողջապես բացատրելի է նաև, որ տնտեսագիտական որոշ շրջանակներում փորձեր արվեցին կառուցել այդ անհամապատասխանությունը հիմնավորող տեսություններ։ Որքան էլ դրանք փաստարկված լինեն զանազան իրողություններով, միևնույնն է, ձևակերպված են ի սկզբանե անհիմն մի ենթադրության վրա, որ քննության առարկա տնտեսությունները իրենց հիմքում շուկայական են։ Սակայն հեղափոխական և անցումային վերափոխումների ժամանակահատվածներում այս խնդիրը առկա է և իրատեսական։ Այն երկատված է՝ պայմանավորված արտադրության ծավալների անխուսափելի անկմամբ։ Անկում և միաժամանակ աճի նախադրյալների ստեղծում, սա խնդիր է, որ դրված է ցանկացած անցումային հասարակության առջև։

Պետական կառավարման քաղաքականության ներկայիս հրապարակայնացումը թե՛ բովանդակային և թե՛ ֆիզիկական առումով բեմա-

[4] Երկուսն էլ «ստեղծագործաբար» կիրառվել են Հայաստանի Հանրապետության կառավարությունների և վիճակագրական ծառայության կողմից։

հարթակ է տրամադրել նաև պատրաստակամ խորհրդատուների և քննադատների մի հոծ բազմության, որոնք նոր իշխանություններին մատնացույց են անում լավագույն կառավարման հնարքները և միջոցները, երբեմն էլ, իհարկե, իրենց մասնակցությամբ և ակտիվ դերակատարմամբ:

Հասարակությանը և առաջին հերթին նոր իշխանություններին հրամցվող խորհուրդների ու հանձնարարականների հիմնական մասը նախ ստիպում է մտահոգվել տնտեսագիտությունը հետագա վարկաբեկումից պաշտպանելու անհրաժեշտության մասին: Երկրորդ՝ դրանք երևի թե հնարավոր կլիներ անտեսել՝ համարելով որպես սոսկ լրագրողական զեղումներ, եթե առկա լիներ կառավարության կողմից որդեգրված՝ գիտական սկզբունքների հիման վրա կառուցված և առաջարկվող որևէ տնտեսական քաղաքականություն: Ընդ որում, այս համատեքստում այդքան էլ էական չէ, թե ինչ հայեցակարգային սկզբունքներով կլիներ կառուցված այդ քաղաքականությունը. կարևորն այստեղ համակարգված գործողությունների պլանի առկայությունն է՝ ուղղված տնտեսավարման նպաստավոր պայմանների ստեղծմանը, որն առ այս պահը բացակայում է[5]:

Ոչ մի կառավարություն ի վիճակի չէ կանխորոշելու տնտեսության մասնավոր հատվածի վարքագիծը. կարող է ընդամենը կանխատեսել, սակայն նա պարտավոր է ստեղծել բարենպաստ պայմաններ ձեռներեցություն ծավալելու և տնտեսությունը զարգացնելու համար: Ահա այս հիմնախնդրի լուծման բացակայությունն է կառավարության ծրագրի էական անկատարությունը:

Ինքնակոչ խրատատուների շարքում չներառվելու մասնագիտական բնազդը մեզ թելադրում է ընտրել առկա խնդիրների լուծման ուղիների ներկայացման այլ եղանակներ: Եվ դա առաջին հերթին ազգային բացառիկության համազգային պատրանքից ազատվելն է և այլոց անցած ուղին ու փորձը հաշվի առնելը, ինչը տեսական դրույթներով ձևակերպել է տնտեսագիտությունը: Բայց այստեղ ծագում է արդեն ավանդական դարձած հարցադրումը, թե որքանով է մեր իրականությունը համապատասխանում «վերացական տեսությանը»: Որքան էլ պարադոքսային թվա առաջին հայացքից, փաստ է, որ կատարյալ տեսականը ամենաիրատեսականն է: Համոզված լինելով վերջինիս ճշմարտացիությանը՝ դիմենք հասարակությունների զարգացման ու առաջընթացի հիմքում ընկած հիմնական սկզբունքներին:

Սկսենք Ադամ Սմիթից. «Մարդը պետական գործիչների և քաղաքագետների կողմից դիտարկվում էր որպես ինչ-որ նյութ քաղաքական մեխանիկայի համար: Քաղաքագետները խախտում էին մարդկային գործունեության նորմալ ընթացքը, այնինչ անհրաժեշտ էր բնությունը թողնել ինքն իրենով, լրիվ ազատություն տալ մարդուն իր նպատակնե-

[5] Տե՛ս http://www.gov.am/files/docs/3133.pdf

րին հասնելու և սեփական ծրագրերը իրականացնելու գործում... **Պետությունը բարբարոսության ստորին աստիճանից բարեկեցության վերին աստիճանին բարձրացնելու համար անհրաժեշտ են սոսկ խաղաղություն, ցածր հարկեր և հանդուրժողականություն կառավարման գործում, մնացածը կանի իրերի բնական ընթացքը:** Բոլոր կառավարությունները, որոնք դեպքերի զարգացումը բռնի ուղղում են այլ ճանապարհով կամ էլ ձգտում են կանգնեցնել հասարակության առաջընթացը, հակաբնական են: Որպեսզի պահպանեն իրենց իշխանությունը, նրանք ստիպված են կեղեքել և դաժանություններ անել»[6]: Մեր հասարակության անցած ուղին ևս ամբողջապես ապացուցում է այս մտքի ճշմարտացիությունը:

Մի այլ առիթով Սմիթը զգուշացնում է. «Քանի դեռ չկա սեփականությունը, չի կարող լինել և պետությունը, որի նպատակն էլ հենց հարստության պահպանումն է...»[7]: Եվ վերջապես, ավելի քան երկու հազարամյակ առաջ հռոմեացի իմաստասերը գրել է, որ բարձրագույն արդարությունը, որին պետք է հետևի քաղաքացին, սեփականության անձեռնմխելիությունն է[8]: Զարգացած բոլոր երկրների տնտեսական և մշակութային առաջընթացն իրականացվել է այս սահմանադրական դրույթի շրջանակներում՝ անկախ այն բանից՝ դրանք գիտակցաբա՞ր են ընտրվել ու պարտադրվել, թե՞ ինքնաբուխ են հաստատվել:

Անհրաժեշտ պայմաններից առաջինը խաղաղությունն է, ինչը արդեն երեսուն տարի պատերազմող մեր երկրի համար որքան կենսականորեն անհրաժեշտ է, նույնչափ էլ առայժմ անհասանելի: Պատերազմի փաստը վերածվել է նաև կառավարությունների թերացումների և ձախողումների արդարացման լավագույն ու անքննելի միջոցի: Իսկ պատերազմական իրավիճակի շարունակական ձգձգման իրական (հատկապես ներքին) պատճառների բարձրաձայնումը և քննարկումը ըստ էության տաբու են, որին մենք ևս կենթարկվենք: Միաժամանակ հիշեցնում ենք Ալբեր Քամյուի հետևյալ ախտորոշումը. «Երբ պատերազմ է պայթում, մարդիկ ասում են, «Երկար չի տևի, շատ անխելք բան է»: Եվ անկասկած, պատերազմն անխելք բան է, բայց դա չի խանգարում, որ այն երկար տևի: Հիմարությունը միշտ էլ պարտադրում է իրեն»[9]:

Հարկերի մեծության և առհասարակ հայաստանյան հարկային համակարգի բնութագիրը հնարավոր ենք համարում բացահայտել՝ դարձյալ անդրադառնալով Ադամ Սմիթին: Նրա ձևակերպած հարկման հիմնական սկզբունքները՝ հավասարաչափություն, որոշակիութ-

---

[6] **W. R. Scott.** Adam Smith as Student and Professor. Glasgow Jackson, Son Company, 1937, p. 53-54.

[7] Ըստ **Аникин А. В.** Юность науки: Жизнь и идеи мыслителей-экономистов до Маркса. М., 1985, էջ 169:

[8] Տե՛ս «Всемирная история экономической мысли», Т. 1, М., 1987, էջ 150:

[9] **Ա. Քամյու,** Ժանտախտը, Եր., 1991, էջ 26:

յուն, հարմարություն և վերջապես՝ ցածր մակարդակ, եթե անգամ նշմարվել են Հայաստանի Հանրապետության հարկման ոլորտում, ապա սոսկ որպես հայտարարված վերացական նպատակներ՝ իրականում գործող հարկային մամլիչը քողարկելու համար:

Եթե վերը ներկայացված երկու ընդհանուր պայմանների հատվածային առկայության դեպքում գործարար ոլորտը, դրսևորելով պարտադրված հարմարվողականություն, նաև ինչ-որ չափով ինքնապահպանման բնազդով իր կենսագործունեությունը իրականացրել է շուկայական սկզբունքների շրջանակներում, ապա երրորդ պայմանի՝ «հանդուրժողականություն կառավարման գործում» չգոյությունը, անկասկած, եղել է ձեռներեցության ծավալումը սահմանափակող ամենամեծ խոչընդոտը: Հայաստանի երրորդ Հանրապետության կայացման հենց առաջին փուլից կառավարման անհանդուրժողականությունը իշխանությունները որդեգրեցին որպես իրենց տիրապետության ապահովման հիմնական միջոց: Հանդուրժողականությունը քաղաքական բնագավառում դեմոկրատիան է՝ իր ազատ և արդար ընտրական մեխանիզմով, որի արմատական ձևախեղման սկիզբը դրվեց դեռևս 1995 համապետական ընտրություններով և սահմանադրական հանրաքվեով[10]:

Տնտեսական ոլորտում «հանդուրժողականության» աստիճանի ախտորոշումն առաջին հայացքից անհամեմատ ավելի բարդ է թվում, քանի որ հանդուրժողականության և դրա դրսևորման՝ մրցակցության կապը ակնառու չէ, և հնարավոր է, որ շատերին նույնիսկ զարմանալի թվա: Շուկայական ավանդույթներ չունեցող հետխորհրդային հասարակությունը, այդ թվում նաև իշխանավորները, մրցակցության դերը ավելի հաճախ ընկալում են սոսկ մրցակցին հաղթելու տեսանկյունից, ինչը մրցակցության կարգավորիչ դերը անտեսելու կամ չգիտակցելու հետևանք է: Հաստատված կացությունը դա է փաստում:

Կառավարությունների քաղաքական կազմից ու տարիքային ցեզից անկախ՝ ներդրումները տնտեսական աճի հիմնական աղբյուրն են, իսկ բարենպաստ միջավայրի ապահովումը՝ հիմնական խնդիրներից մեկը: Ներդրումային միջավայրի ստեղծման խնդիրը երկմակարդակ է. առաջինը վերաբերում է հասարակության և տնտեսության նորմալ կենսագործունեությունը ապահովող ընդհանուր պայմաններին, ինչի մասին նշվել է վերը, իսկ երկրորդը՝ բուն ներդրումները իրականացնելուն՝ կողմնորոշիչներ ունենալով ոչ թե հայրենասիրությունը կամ այլասիրությունը, քաղաքական համակրանքները կամ հակակրանքները, այլ շահույթները:

Հայտնի է, որ ներդրումների և տնտեսական աճի կապը դրսևոր-

---

[10] «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի՝ 1995 թ. հունիսի հինգին հաջորդող համարներում արձանագրված ընտրությունների քվեարկության արդյունքների պարզ համադրումը ֆիզիկական ճշմարտության աստիճան է երաշխավորում այս պնդման համար:

վում է նախ ռեսուրսների՝ արտադրական կարողությունների և ապա եկամուտ – ծախսեր հոսքերի հավելաճերն ապահովելու միջոցով: Այս տարանջատումը զուտ տեսական՝ բանավիճային խնդիր չէ, ինչպես կարող է թվալ, այլ պետական կառավարման արդյունավետության բարձրացման սկզբունքների և գործուն եղանակների ընտրության անհրաժեշտ հանգամանք է: Սրանք հարցադրումներ են, որոնց իրատեսական պատասխանները կօժանդակեն մեր հասարակության առջև կանգնած հիմնախնդրի լուծմանը:

Վերջաբանի փոխարեն. «Աշխարհում գոյություն ունեցող չարը համարյա միշտ տգիտության ծնունդն է, և բարի կամեցողությունը կարող է նույնքան գործել, որքան չարությունը, եթե լուսավորված և գիտակցված չէ»[11]:

Բանալի բառեր – *տնտեսական աճ, զարգացման ցուցանիշներ, IDI՝զարգացման ամփոփ ինդեքս, զարգացման ընդհանուր պայմաններ, կառավարության ծրագիր, ներդրումներ*

ГАГИК ГАЛСТЯН – ***Проблема экономического роста и государственное управление***. – В статье исследуются принципы, на основе которых правительство создаёт условия для экономического роста и выполнения своих программных целей. С учётом пути, пройденного развитыми странами, проанализирована сформированная в Армении экономическая система. Обозначены конкретные задачи по реформированию её экономики. Сопоставлены также совокупные показатели экономического развития – GDP и IDI.

Ключевые слова: *экономический рост, показатели развития, инклюзивный индекс развития, общие условия развития, программа правительства, инвестиции*

GAGIK GALSTYAN – ***The Problem of Economic Growth and Government Actions***. – In the present article, we have studied the principles of creating conditions that are necessary for the economic growth from the point of view of the actions of the government as well as their program aims. Taking into consideration the way passed by the contemporary developed countries, we have presented a comparative analysis of the economic system formed in RA. A number of concrete problems for the reformation of the economic system are identified. We have also compared the aggregate indicators of economic growth, namely GDP and IDI.

Key words: *economic growth, indicators of development, IDI, general conditions of development, government program, investments*

Ներկայացվել է՝ 01.03.2019, գրախոսվել է՝ 02.04.2019, ընդունվել է տպագրության՝ 22.04.2019

[11] **Ա. Քամյու**, նշվ. աշխ., էջ 83-84: